# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**25 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 27-Ա**

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17–րդ հոդվածների պահանջներով՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 25-ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը

1. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և դրա վրա գտնվող շինությունը ուղղակի վաճառքի եղանակով՝ գնման նախապատվություն իրավունք ունեցող անձին օտարելու մասին:
3. Վերին Պտղնի համայնքի սեփականություն հանդիսացող ջրագծերը՝ խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին որպես անհատույց սեփականություն հանձնելու մասին:

Կողմ -4 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
## 25 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 28-Ա

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 30-րդ և 31-րդ կետերի պահանջներով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Թամարա Առաքելյանի սեփականություն հանդիսացող 07-062-0203-0060 կադաստրային ծածկագրով 0.0256 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Գոռ Գասպարյանի սեփականություն հանդիսացող 07-062-0203-0064 կադաստրային ծածկագրով 0.09 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

3. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել Գոռ Գասպարյանի սեփականություն հանդիսացող 07-062-0203-0063 կադաստրային ծածկագրով 0.09 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

4. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել Սուսաննա Պողոսյանի սեփականություն հանդիսացող 07-062-0041-0063 կադաստրային ծածկագրով 3.46686 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը արդյունաբերական,

ընդերքօգտագործման և այլ արտադրական, գործառնական նշանակությունը՝ արտադրական :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4.ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 29-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՝ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի դ) ենթակետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփական ություն հանդիսացող 07-062-0201-0017 կադաստրային ծածկագրով 0.0525 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և դրա վրա առկա 07-062-0201-0017-001 կադաստրային ծածկագրով 4.9 քմ ջրահեռացման հորը սեփականության վկայական N19052021-07-0149:

2.. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական շինության 1 քմ -ի համար՝ 23400 ( քսաներեք հազար չորս հարյուր ) ՀՀդրամ (տարածագնահատման 7-րդ գոտու՝ կիրառված գործակիցը 0.26)

2) Հասարակական կառուցապատման հողամասի 1 քմ-ի կադաստրային արժեքը՝ 4524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) ՀՀդրամ :

3.Առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրա վունքով ուղղակի վաճառքի եղանակով գնելու վերը նշված գույքը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3..ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4..ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060 517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա**

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱԳԾԵՐԸ՝ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ԻՆ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է .**

Վերին Պտղնի համայնքի սեփականություն հանդիսացող 20854315 (քսան միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ արժողությամբ ջրագծերը՝ խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը , անհատույց սեփականության իրավունքով հանձնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3..ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4..ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**